ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻ

30.10.2024թ **Լոռի Բերդ համայնք**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա. Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Ս.Մակարյանը
Մասնակցում էին՝
Մարզի խորհրդի անդամները
Հրավիրված էին՝

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանը, Հ.Ավետիսյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ Ռ.Մարգարյանը, Մ.Դալլաքյանը, Ա.Թումանյանը, Ռ.Պողոսյանը, Կ.Ադամյանը, Ս.Մակարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Մատինյանը, Գ.Մելիքսեթյանը, Է.Հախվերդյանը, ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարները, լրատվության ներկայացուցիչները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Մարզում սուբվենցիոն ծրագրերով ու պետական միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի և 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյան, 10 րոպե)

2. 2024 թվականի 9 ամիսներին Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյան, 10 րոպե)

3. Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյան, 10 րոպե)

4. Առողջապահության ոլորտում իրականացվող աշխատանքների, գրիպի համաճարակի և դրա դեմ պատվաստումների անհրաժեշտության վերաբերյալ

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյան, 10 րոպե)

5. 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների փոխհատուցման հետ կապված գործընթացի մասին.

(Զեկուցողներ՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան և ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյան, 15 րոպե)

6. Այլ հարցեր:

Ելույթ ունեցան

1. Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը ներկայացրեց մարզխորհրդի նիստը արտագնա անցկացնելու նպատակների, համայնքներում առկա խնդիրների, իրականացված աշխատանքների և տարբեր բնագավառներում անելիքների վերաբերյալ տեղեկատվություն: Մարզպետն իր մտահոգություններն արտահայտեց նաև մարզում սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքների որակի, ժամկետների և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման վերաբերյալ, համայնքներում իրականացվող ապօրինի շինարարությունների և շինթույլտվությունների, ճանապարհամերձ տարածքներում ապօրինի կառույցների նկատմամբ վերահսկողության և օրինականացման հարցերի նկատմամբ, սեփական եկամուտների հավաքագրման և պլանային ցուցանիշների կատարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ցածր որակի նկատմամբ, հայտնելով, որ բոլոր նշված հարցերի նկատմամբ համայնքների ղեկավարները պետք է կրեն անձնական պատասխանատվություն և հնարավորինս միջոցներ ձեռնարկեն թերությունների վերացման և ստանձնած պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց սուբվենցիոն ծրագրերով և պետական միջոցներով 2022, 2023, 2024թթ-ի իրականացվող ծրագրերի ընթացքի, շինարարական աշխատանքների որակի, ժամկետների և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև 2025թ. համար նախատեսված ծրագրերի նախնական հայտերը, հայտնելով, որ փաթեթների ներկայացման վերջնաժամկետը նոյեմբերի 25-ն է, և անհրաժեշտ է հաշվի առնել գերատեսչությունների դիտարկումները և առաջարկությունները, ինչպես նաև նոր կարգով սահմանված լիցենզիաների առկայության պարտադիր պահանջը:

Ներկայացվեց նաև ճանապարհաշինության և քաղաքաշինության ոլորտներում իրականացվող աշխատանքների ընթացքը, ինչպես նաև Լոռու մարզի կրթական և առողջապահական հաստատությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման, Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և դատական կարգով իրենց իրավունքները վերականգնած թվով 37 ընտանիքի

բնակապահովման հարցերի մասին, որոնցից թվով 16 ընտանիք արդեն պայմանագրեր են կնքել և ստացել ֆինանսական աջակցություն կամ վկայագրեր:

Անդրադառնալով զեկույցով մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերով և պետբյուջեի միջոցներով իրականացվող շինաշխատանքներում արձանագրված որակական թերություններին, ժամկետների ուշացումներին՝ մարզպետի առաջարկությամբ համայնքների ղեկավարները պարզաբանումներ են ներկայացրել թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ: Մարզպետն ընդգծել է, որ նրանք հանդիսանում են համայնքներում իրականացվող աշխատանքների թիվ մեկ պատասխանատուն և պետք է հետևողականություն ցուցաբերեն, որպեսզի այդ աշխատանքներն իրականացվեն բարձր որակով և սահմանված ժամանակացույցով, ժամկետներ է սահմանել թերությունների վերացման ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու համար, նշելով, որ անհրաժեշտ է անհանդուրժողականություն ցուցաբերել շինարարների անբարեխիղճ գործելաոճի նկատմամբ, լինել պահանջատեր և հետևողական: Պետբյուջեի և համայնքային միջոցները պետք է տնօրինվեն առավելագույնս արդյունավետ և նպատակային:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյանը նշեց, որ մարզի համայնքները եկամուտների հավաքագրման ցուցանիշներով 9 ամսվա տվյալներով հավաքագրել են 3 541 327 000 դրամ, որը կատարվել է 62.7%-ով նախորդ տարվա 69,5% -ի դիմաց, նշելով որ ընդհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ չեն և առաջարկեց քայլեր ձեռնարկել հավաքագրման մակարդակը բարձրացնելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ անհատական աշխատանքներ տանելու, ինչպես նաև օրենքով սահմանված տույժ ու տուգանքների կիրառման ուղղությամբ:

Անդրադառնալով խնդրի կարևորությանը՝ մարզպետ Ա.Ղազարյանը առաջարկեց 04.11.2024թ հրավիրված խորհրդակցության ժամանակ, ըստ համայնքների, ներկայացնել պարզաբանումներ սեփական եկամուտների հավաքագրման պարտավորությունների թերի կատարման պատճառների վերաբերյալ և մինչև տարեվերջ եկամուտների կատարման ցուցանիշները հասցնել 100 տոկոսի:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանը ներկայացրեց գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի սուբսիդավորման, լիզինգի աջակցության, տավարաբուծության զարգացման «Բուսաբուծության աջակցության» և այլ ծրագրերի վերաբերյալ, մասնավորապես՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող թվով 15 ծրագրերի և ենթածրագրերի միջոցով տրամադրվող ֆինանսական և այլ տեսակի աջակցությունների վերաբերյալ, միաժամանակ հորդորեց համայնքների

ղեկավարներին մշտապես լինել գյուղացու կողքին, օժանդակել և աջակցել բարձրացրած հարցերի լուծման գործում:

Մարզպետ Ա.Ղազարյանը զեկույցի շրջանակներում անդրադարձել է պետական աջակցությամբ իրականացվող և իրականացվելիք գյուղատնտեսական ծրագրերի կարևորությանը, նշելով, որ գյուղի բնակիչը պետք է լինի մեր առաջնային թիրախում: Պարբերական հանդիպումները, նրանց հուզող հարցերի վերաբերյալ իրազեկվածությունը համայնքների ղեկավարների և վարչության առաջնային խնդիրներից պետք է լինեն: Նշեց նաև, որ անհրաժեշտ է համայնքներին իրազեկել գյուղատնտեսության ոլորտում կիրառվող ժամանակակից մեթոդների, պետության օժանդակությամբ իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ, առաջարկելով վարչությանը՝ առավելագույն չափով շահառուների ներգրավման նպատակով, համայնքների ղեկավարների մասնակցությամբ, իրազեկման աշխատանքներ իրականացնել մարզի համայնքներում և բնակավայրերում:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց առողջապահության ոլորտում իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ ընթացիկ տարվա տվյալներով վճարովի ծառայության և պետպատվերի կատարողականի աշխատանքների ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են. կազմելով՝ 1.3 միլիարդ դր. 2024թ-ի համար 2023թ-ի 1.2 միլիարդի վճարովի ծառայության դիմաց, և 4.6 միլիարդ դրամ պետպատվերի գումար՝ նախորդ տարվա 4.1 միլիարդի դիմաց: Ներկայացրեց նաև առողջապահության ոլորտի բարեփոխումների, բուժհիմնարկների աշխատանքային պայմանների բարելավման, հագեցվածության, ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացվեց գրիպի համաճարակի տարածման, ինչպես նաև դրա դեմ պատվաստումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով պատվաստումների անհրաժեշտության և կազմակերպություններում ու բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքների մասին:

Առողջապահության ոլորտում առկա մի շարք խնդիրների հետ կապված՝ մարզպետ Ա.Ղազարյանը կարևորեց մարզի բոլոր համայնքներում բուժծառայությունների և բուժառուներին սպասարկման որակի բարձրացման, անհրաժեշտ բուժսարքավորումներով և պարագաներով, մասնագետ կադրերով համալրման անհրաժեշտությունը և հստակ գործողություններ իրականացնելը, հայտնելով, որ մարզում բուժսպասարկման որակը պետք լինի այնպիսին, որ բուժառուները ցանկանան իրենց բուժսպասարկումն ստանալ ոչ թե մայրաքաղաքում, այլ՝ մեր մարզի բուժհաստատություններում, և այս ուղղությամբ մարզի բուժհաստատությունների հետ միասին պետք է հստակ գործողությունների ծրագրեր մշակվեն և իրականացվեն, քանի որ ներկայումս իրականացվող աշխատանքների տեմպերը չեն բավարարում:

6. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Հ.Ավետիսյանը և Գ.Ասրյանը ներկայացրեցին 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների փոխհատուցման հետ կապված գործընթացի մասին տեղեկատվություն:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

1.1 Մեկօրյա ժամկետում համապատասխան գրություն ներկայացնել ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին՝ Ստեփանավանում իրականացված ճանապարհի շինարարության ոչ բարվոք որակի վերաբերյալ:

1.2 Անհրաժեշտ աշխատանքներ տանել, վերահսկել և օժանդակություն ու աջակցություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին՝ պետական և սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների որակով և ժամկետներում /մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը/ կատարման ուղղությամբ:

1.3 Անհրաժեշտ աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների և համապատասխան գերատեսչությունների հետ՝ 2025 թ-ի սուբվենցիոն ծրագրերի ներկայացումը մինչև ս.թ. նոյեմբերի 25-ը ավարտելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ. Դալլաքյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ, օժանդակություն և աջակցություն ցուցաբերել վերջիններիս՝ հարկատուների և մեծ պարտավորություններ ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ անհատական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

3.1 Եռօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ –ում դիալեզի բաժանմունքի հիմնադրման վերաբերյալ:

3.2 Անհրաժեշտ աշխատանքներ տանել մարզի համայնքներում բուժծառայություն-ների և բուժառուների սպասարկման որակի բարձրացման ուղղությամբ, ներկայացնել առաջարկություններ բուժսարքավորումներով և համապատասխան մասնագետներով համալրման նպատակով:

3.3 Բացատրական աշխատանքներ տանել պետական և ոչ պետական հիմնարկներում, ինչպես նաև ազգաբնակչության շրջանում գրիպի տարածվածության, վտանգավորության և պատվաստումների դերի բարձրացման ուղղությամբ:

Ա ռ ա ջ ա ր կ վ ե ց

1. Հաշվի առնելով համայնքների զարգացման գերակայությունները, գերատեսչությունների և մարզպետարանի կողմից ներկայացված դիտարկումները և օրենսդրական նոր կարգով սահմանված լիցենզիաների առկայության պարտադիր պահանջը, 2025թ-ի համար նախատեսված սուբվենցիոն ծրագրերը մինչև ս.թ. նոյեմբերի 25-ը սահմանված կարգով ներկայացնել մարզպետարան:
2. Համայնքների պատվիրատվությամբ և այլ ծրագրերով համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների կատարման որակի և ժամկետների նկատմամբ իրականացնել անհրաժեշտ հսկողություն և սրտացավություն, թույլ չտալ ժամկետների ուշացումներ, որպես անձնական պատասխանատու դրսևորել հետևողականություն, անհանդուրժողականություն ցուցաբերել անբարեխիղճ շինարարների նկատմամբ, կիրառել նաև օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:
3. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները ըստ հարկատեսակների 100%-ով կատարման ուղղությամբ, անհատական աշխատանքներ իրականացնել խոշոր հարկատուների /մասնավորապես իրավաբանական անձանց/ հետ, ծանուցագրեր ուղարկել, իրազեկել հարկերի վճարման վերջնաժամկետների, սահմանվող տույժ ու տուգանքների վերաբերյալ, և ըստ անհրաժեշտության կիրառել պատասխանատվության միջոցներ:
4. Մինչև 04.11.2024թ. ժամը 16.00 նշանակված խորհրդակցությանը ներկայացնել տեղեկատվություն սեփական եկամուտների հավաքագրման պարտավորությունների թերի կատարման պատճառների, խոշոր հարկատուների /200000 դրամ և ավել պարտավորություններ ունեցող / հետ տարվող աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ խնդրի լուծման ուղղությամբ տարվելիք աշխատանքների ուղղությամբ:
5. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների ազգաբնակչության շրջանում, գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների, ներկայացված և իրականացվող բազմաթիվ աջակցության ծրագրերի առավելությունների և շահառուների ներգրավման ուղղությամբ, ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն:
6. Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանին՝

Մինչև 11.11.2024թ. ամբողջական տեղեկատվություն և առաջարկություն ներկայացնել Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի հիմնանորոգման հետ կապված խնդրի լուծման վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-11-04 14:42:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99